

կարող ենք եզրակացնել, որ Նոտարայ, Շիրական երկրները չեն կարող նոյնանալ որպէս մէկ երկրանուն, քանի որ եղել են վարչաքաղաքական տարբեր միաւորներ, որոնցից Նուհադրան համապատասխանում էր Ադիաբենէի Մոսուլի եւ Նինուէի շրջանին՝ ընդգրկելով նաեւ սրանցից հիւսիս՝ մինչեւ հայկական տարածքներ ընկած Ադիաբենէի միւս շրջանները, իսկ Շիրականը՝ Նոր Շիրականի բղեջնութեան հարաւարեւմտեան մասին, որը Բաբգէն կաթողիկոսի նամակում աւանդոյթի ուժով շարունակում է կոչուել Նոշիրական՝ նկատի ունենալով Դասն, Նիհորական եւ Մահկերտ-Տուն երկրների տարածքը: Հետեւաբար, Նոշիրականի վերականգնումը Նոտ Արտաշիրական անընդունելի է: Ուրեմն, Բաբգէն կաթողիկոսի նամակում յիշատակուած Նոշիրականը՝ որպէս Նինուէ նահանգի մաս, եկեղեցական առումով մտել է Արբելայի թե-

մի մէջ, որի կազմում յիշատակուած են Բէյթ-Դասէնի եւ Բէյթ-Մահկարտի եպիսկոպոսութիւնները, հէնց որոնց էլ ուղղուած էր Հայոց կաթողիկոսի նամակը: «Աշխարհացոյց»-ում յիշատակուած Շիրականը վարչական առումով ընդգրկում է Դասն, Նիհորական եւ, թերեւս, Մահկերտ-Տուն երկրները: Եթէ Մահկերտ-Տունը նոյնանում է Մարծին վերականգնուած տեղանուանը, ապա Մահկերտ-Տունը խեղայարի մարզպանութեան մէջ հանդէս է եկել որպէս աւանդին շահր, այդ դէպքում Դասնը ու Նիհորականն էլ Շիրական անուան տակ նոյնպէս շահրի կարգավիճակով մտել են խեղայարի մարզպանութեան մէջ: Հետեւաբար Շիրական անուան տակ Քուստի խորուարանի կազմում այլ երկիր տեսնելը մերժում է եւ չի հաստատում աղբիւրների տեղեկութիւններով:

ՊԱՀԼԱԽՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՈՒ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Աշոտ Սաևուչարեան

Հայերէն վիմագրերի ժամանակագրական կարգը հնարաւորութիւն է ընձեռում հետեւելու ինչպէս Բագրատունեաց թագաւորութեան շրջանում, այնպէս էլ յետագայում այս կամ այն տիտղոսի զարգացման, մի ազնուականական տնից միւսին փոխանցուելու ճանապարհը: Արդէն ժ. դարի երկրորդ կէսից սկսած Բագրատունեաց պետութեան պատուազոյն տիտղոսները կրում եւ ամենաբարձր պաշտօնները, ոչ միայն աշխարհիկ, այլեւ հոգեւոր, վարում էին Պահլաւունեաց տոհմի ներկայացուցիչները: Ի դէպ, տակաւին քննութեան կարօտ է այն կարեւոր հանգամանքը, թէ ովքեր էին Պահլաւունիները եւ ինչպէս կարողացան հասնել այդ բարձր դիրքերին:

Բագրատունեաց Հայաստանի թերեւս ամենաառաջնակարգ իշխանների՝ Պահլաւունիների ազգաբանական հարցերը ուսումնասիրել կամ դրանց անդրադարձել են մի շարք հետազօտողներ՝ առաջ բերելով երկու հակադիր տեսակէտներ:

Ն. Ակինեանը, որն այդպէս յստակօրէն գատում է յետագայում Պահլաւունիների լքած տիրոյթներն ու տոհմանունը ժառանգած, նրանց վասալ, Ծաղկունեաց զաւառի տէր Ապիրատեանների ճիւղն ու կազմում երկուսի ազգաբանութիւնը, համաձայն տոհմի ազդեցիկ ներկայացուցիչ, հայ միջնադարեան ականաւոր գիտնական, իմաստաբան, քերականագէտ, ռազմական եւ քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի վկայութիւնների, Պահլաւունիների սերումը բխեցնում է կամսարական նախարարական տնից,¹ իսկ ազգատոհմի վերա-

ծնունդը, այնպիսի դասական, ինչպիսին Ղ. Ալիշանն է, վերագրում է ժ. դարին²: Ն. Աղոնցն էլ հայ վաղագոյն մատենագրական աղբիւրների հիման վրայ կամսարականներին համարում է Արշակունիներին համադն³:

Յարկաւ, այդ եւն հաստատում նաեւ վիմական աղբիւրները: Սանահնի արձանագրութիւններից մէկում ժԱ. դարի առաջին կէսի գործիչ, հայոց մարզպան Աբլղարիբը վկայակոչւում է որպէս «յազգէ Պահլաւունի, ի տանէ Արշակունեաց»⁴: Նշանաւոր սպարապետ, իշխանաց իշխան վահրամ Պահլաւունին Մարմաշէնի 1029 թ. վիմագրում իրեն յիշատակում է «որդի Գրիգոր իշխանի հայոց մեծաց, ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից սրբոյն Գրիգորի հայոց Լու-

թիւ 1-5, էջ 3: վերջին տարիներին Գ. Սարգսեանը կարեւոր բացառաւորումներ ու տարանջատումներ է կատարել Պահլաւունիների եւ Ապիրատեանների ազգաբանական հարցերում (տե՛ս Գ. Սարգսեան, Գրիգոր-Ապիրատ Հասանեան, հիմնադիր կեչարիսի վանքի [վիմագրական] Գրիգորի վկայութիւնը, «Հին Հայաստանի մշակոյթ», Ժողովածոյ 12, Երեւան, 2002, էջ 107-112): Իսկ Կ. Մաթեոսեանը Արաբալայ աղբիւրներով հարստացրել է Ապիրատեան կամ Հասանեան իշխանատոհմի ծագումնաբանական ակունքները (տե՛ս Կ. Մաթեոսեան, Հագարամեայ կեչարիսի հիմնադրման պատմութիւնը, «Լեւոնտի», 2004, էջ 77-91: Տե՛ս Առյուծի Հարոց թատի վանքի եւ Ապիրատեան տոհմի պատմութեան Արաբալայ տուեալներ, Բանբեր Մատենադարանի, 17, Երեւան, 2006, էջ 148-167, նաեւ Առյուծի Ծիրակի պատմութեան էջեր, Երեւան, 2010, էջ 101-138):

2 Ղ. Ալիշան, Ընդհանրի եւ պարսկալ իւր, վեճետիկ, 1873, էջ 22-23:
 3 Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 334:
 4 Կ. Ղաֆաղարեան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1957, էջ 97:

1 Ն. Ակինեան, Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեաց ազգաբանութիւնը, ՉԱ, Վիեննա, 1954:

(890-914), յուսախաբուած հայ նախարարների խռովութիւններից ու դաւաճանութիւններից, մարզպանի պաշտօնավարութիւնը պէտք է վստահէր իրեն հաւատարիմ եւ այդ բնագաւառում փորձ ունեցող մարդու: Իսկ այդպիսին կարող էր լինել միայն իր իշխանական տիրոյթների վերակացու Վահրամի որդի Գրիգորը¹⁹:

Վ. Պետրոսեանցը գտնում է. «Ամենայն հաւանականութեամբ այդ ժամանակ Գնթուհիներից վերցուել է նաեւ նրանց Նիգ գաւառը, որն այնուհետեւ անցել է նրանց իշխանութեան տարածքում գտնուող Բջնի բերդի տէրերին՝ Պահլաւունիներին»²⁰: Նկատենք, որ վերջիններս այդ գաւառում կամ, ինչպէս Ղ. Ալիշանն է կարծում, նրա արեւմտեան հատուածում²¹, մինչ այդ տիրոյթներ չեն ունեցել: Հնարաւոր է՝ Պահլաւունիներն իշխում էին հարեւան Արագածոտն գաւառի արեւմտեան մասում, որտեղ նրանք որոշ կալուածներ են ստացել պատմական թատերախմբից Ը. Ղարի երկրորդ կէսին Մամիկոնեան, Կամսարական, Ամատունի, Գնունի նախարարական տների անյետացումից յետոյ:

Գրիգոր Վահրամեանից յետոյ, ըստ այն ժամանակ ընդունուած կարգի, մարզ-

20 Ղարի երկրորդ կէսին Մամիկոնեան, Կամսարական, Ամատունի, Գնունի նախարարական տների անյետացումից յետոյ: 21 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 248:

19 Նրան ժամանակակից է ուն «գնե՞ծն գխոհեմ եւ գհանճարեղ իշխանն Հայոց, Գրիգոր», որից մտերի գերագանցութիւնից, ուղարկում է խալիֆի մօտ՝ «գխաղաղութիւն» եւ «յօգնակաւորութիւն» խնդրելու (տե՛ս Յովհաննէս Գրասխանակերտցի, էջ 234-235):

20 Վ. Պետրոսեանց, Գնթուհիների նախարարական տոււնը. Երիտասարդ գիտաշխատող, ԵՊՀ, 1980, թիւ 1 (31), էջ 58-64:

21 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 248:

պանութեան պաշտօնը պէտք է նրա ժառանգն ստանձնէր: Ըստ այդմ, նրա որդին պէտք է համարել այն հայրենասէր իշխանին, որի մասին կաթողիկոս պատմիչը հարգում է. «...վասն զի ոմն ի պատուաւորաց անտի Շահանն կոչեցեալ շահայ (Աշոտ Բ. Երկաթի՝ 914-928 - Ա. Մ.) Գէորդ աւուն, ելեալ շրջէր զգաւառօքն սակաւամասնեայ շինութիւն աշխարհին ամրացուցանել ի հինից թշնամեաց»²²: Յովհաննէս Գրասխանակերտցու այս յիշատակութիւնից ակներեւ է, որ Գեւորգն ունէր այն պաշտօնը, որը ժամանակին կատարում էր Հասան Գնթուհին, այն է՝ շինութիւնների բերդերի ամրացումը, նաեւ հսկողութիւնն ու պաշտպանութիւնը²³: Գեղայոց (Քեղի) պաշարուած ամրոցի տակ Գեւորգը, ըստ պատմիչի, պարտութեան է մատնուած արաբ զօրապետ Բաշիրին, որին մինչ այդ յաղթել էր քսան քաջերով²⁴:

22 Յովհաննէս Գրասխանակերտցի, էջ 354-355:

23 Նոյն տեղում, էջ 182-183:

24 Նոյն տեղում, էջ 354-357: Կ. Մաթեոսեանի նորայայտ վկայութիւնը Քեղի ամրոցի տէր, իշխանաց իշխան Գեորգի (Ժ. դ. վ. եւ ԺԱ. դ. սկ.) ծագման մասին (տե՛ս Կ. Մաթեոսեան, Հատուց թատի եւ Ապիրատեան տոհմի պատմութեան նորայայտ տուեալներ, էջ 147-167, նաեւ նոյնի Անի-Շիրակի պատմութեան էջեր, էջ 108-111). գալիս է փարատելու մեր այն կասկածը, որ Հասանի որդի եւ Գրիգոր Ապիրատի այս եղբայրը չէր կարող մերձատր ազգականը կամ անմիջական շտապիղը լինել Աշոտ Երկաթի օգնակաւոր՝ անուանակից Գեորգի: Այդ դէպքում առաջինի եղբորորդիները՝ Ապրախայան ու Վասակը, չէին կարող կնութեան առնել տուեալ պարագայում անմիջական արիւնակից Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու դուստրերին: Բացի այդ, արքունական ծառայողը Գեղայոց ամրոցի պաշարման ժամանակ գտնուել է պղտել ոչ թէ իրեն այս ամրոցի տէր, ինչը չի մատնանշում պատմիչը (ամրոցը նախապէս յիշատակուում է որպէս Բագրատունի տոհմի տիրոջ, տե՛ս Յովհաննէս Գրասխանակերտցի, ծանօթագրութիւն թիւ 132, էջ 379), այլ ի պաշտօնէ կազմակերպել է բերդի պաշտպանութիւնը, որի մասին խօսել ենք վերեւում:

Ինչպէս յայտնի է, վերը նշուած տեղեկութիւնները սկզբնաղբիւր են հանդիսացել Մուրացանի համար՝ շարագրելու հանրածանօթ ու սիրելի «Գեւորգ Մարզպետունի» հայրենաշունչ պատմալէսը:

Մեզ յայտնի պատմական միւս բոլոր աղբիւրները Գեւորգի մասին համաօրէն լուում են: Սակայն Մ. Չամչեանը նշում է, որ Աշոտ Երկաթի մահից յետոյ արքաներէս Սեբաստ (928-953), ժառանգելով հայոց գահը եւ ստանձնելով Հայաստանն արաբներից վերջնականապէս ազատագրելու հայրենանուէր գործը, ժողովում է հայկական զօրքերը՝ օգնական ունենալով իր քաջ իշխան «Գէորգին յազգէ Մարզպետունեաց»²⁵: Մի ուրիշ տեղ, նկարագրելով Ափխազաց Բեր թագաւորի դէմ յաղթական արշաւանքը, գրում է. «...էսո Աբաս զզօրս իւր հանդերձ Գէորգաւ (≈943 թ. - Ա. Մ.)»²⁶:

«Գեւորգ Մարզպետունի» վէպում Գլխաւոր հերոսի որդին Գոռն է: Պատմական աղբիւրները Գոռի մասին ոչինչ չեն յայտնում: Բայց Մատթէոս Ուռհայեցին հարորդում է մի ուշագրաւ տեղեկութիւն, ըստ որի. «Յայսմ ամի (961) ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն եւ հինգ հազար արանց քաջ»:

25 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., Երեւան, 1984, էջ 822: Լէօն, բարձր գնահատելով Մ. Չամչեանի գործը, վրդովում է, թէ ինչի հիման վրայ է նա Գեւորգին Մարզպետունի համարում. երբ Յովհաննէս կաթողիկոսը, որը միակ աղբիւրն է, չի յիշատակում, թէ որ տոհմից էր այս Գեւորգը (տե՛ս Լէօ, Երկերի ժողովածոյ, հտ. 2, էջ 568, տողատակ): Գեւորգին Մարզպետունի են կոչում նաեւ Ղ. Ալիշանը (տե՛ս Այրարատ, էջ 359) եւ Գ. Յովսէփեանը (տե՛ս Խաղբակեանք կամ Պոտեանք Հայոց պատմութեան մէջ, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 66): Կարծում ենք, որ նա Մարզպետունի է անուանուել ըստ իր վարած պաշտօնի:

26 Մ. Չամչեանց, Աշխ., էջ 829:

զատ ի յարքունական գնդէն»²⁷: Նորից Մ. Չամչեանից ենք իմանում, որ Աշոտ Գ. Ողորմածի (953-977) վերակազմած ութսունհազարանոց բանակի (քառասունհինգ հազար մարզպետական եւ երեսունհինգ հազար արքունական - Ա. Մ.) սպարապետ է կարգուում «զորդի Գէորգայ զ Գոռ յազգէ Մարզպետունեաց»²⁸:

Ինչպէս նշել են վերեւում Գրիգոր Մագիստրոսի կապակցութեամբ, հետագօտողները Պահլաւունիների նախահայր են համարում Աբուղղամրին, որի պատուին հարանուգները Անիում եկեղեցի են կառուցել ու մի շարք արձանագրութիւններում անունը յաւերժացրել:

Գոռ եւ Աբուղղամր անձնաւորութիւնները, ինչպէս նրանց անունների ստուգաբանութիւնն է պարզում, նոյնն են:

Հրաչեայ Աճառեանը Գոռ անձնանունը, որը տակաւին հնուց յայտնի է (Տիգրան Մեծի եղբայր Գոռակլը, (փաղաքշարական ձեւով -Ա. Մ)) ստուգաբանում է որպէս խրոխտ, հպարտ, խիզախ, յանդուգն²⁹:

Այն ծագում է գոռ արմատից, որից կազմուած են գոռոգ, գոռոգանալ, գոռոգաբար եւ այլ ձեւերը: Գոռ արմատն արտաբայում է խիզախ, խրոխտ, ահաւոր, նաեւ յայտնում է խիզախ, խրոխտ, ահաւոր, նաեւ կոխ, պատերազմ³⁰, բուն, ահրձեկց իմաստները, օրինակ՝ «Այր գոռ պատերազմէր», «Նա էր այր ժանդ եւ գոռ պատերազմէր»:

27 Մատթէոս Ողորմածի, Ժամանակագրութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Լ. Բարթիկեանի, Երեւան, 1991, էջ 8-9:

28 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., էջ 837: Պետք է նկատել, որ Աբասի թագաւորութեան շրջանի վերաբերեալ պատմական աղբիւրները սուղ են:

29 Լ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա., Երեւան, 1942, էջ 488:

30 Լ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 580-581:

է «ազնուատոհմիկ», «իշխան»⁴², «ազատ»: Հնում «ազատները» հեծեալներն էին⁴³, այսինքն՝ ձիաւոր ազնուականները: Հայերէնում «ձի» բառի «նժոյգ», «երկվար» եւ այլ հոմանիշների մագիստրոսեան շարքում հանդիպում ենք «փահլ»⁴⁴ ձեւին: Հետեւապէս, հեծեալ՝ «ձի-ա (ձիով)- որ (է)», դառնում է «պ(Փ)ահլ-աւ(ձիով)-ուհի(է)»՝ Պահլաուհի, պարսկերէն՝ Փեհլեհի:

Աշոտ Գ. Բագրատունու թագաւորութեան եւ Վահան Ա. Սիւնու հայրապետութեան օրօք Մերոպ երէց Վայոցձորեցի մատենագիրը, զարմանալի զուգարհպութեամբ Վահրամ Պահլաուու ծննդեան տարեթուին, այսինքն՝ 967-ին, գրել է իսկական գահնամակի հեղինակ Ս. Սահակ Պարթեւից (387-439) առաջ գործած Ս. Ներսէս Մեծի (353-373) պատմութիւնը եւ իր ձեռքի տակ եղած նիւթերից քաղել ու ներկայացրել հայոց պատուաստիճանների հրովարտակը,⁴⁵ որտեղ Պալուհի նախահայկեան նախարարական տան փոխարէն, որից առաւել յայտնի է Աւարայրի քաջ նահատակ Արտակը, մտցուել է Պահլաուհի տոհմանունը:

Կարծում ենք, որ ըստ Գր. Մագիստրոսի ու Հ. Աճառեանի ստուգարանութիւնների, յունարէն «Γεωργιος» («Գէորգիոս»)⁴⁶ եւ վերջինիս կողմից չմեկնաբանուած պահլաւերէն Art («երկիր», «հող»)⁴⁷ ու հայերէն ականել («փորել փոս,

42 Ն. Աղոնց, Հայաստանը՝ Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 305:
 43 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ, հտ. III, Երեւան, 1976, էջ 136:
 44 Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Մեկնութիւն քերականի, գետեղումս Լ. Խաչերեանի Գրիգոր Պահլաուհի մագիստրոս գրքում, էջ 413:
 45 Տե՛ս Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի հայոց հայրապետի, Վեներտիկ, 1853, էջ 33:
 46 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 454-455:
 47 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Ա, էջ 375 - 21:

խոռոչ», որտեղից էլ առաջանում է անուանումը այժմեան «ական» (ԱՍԿԱ) պայթուցիկ լիցքով սարքի, որը հիմնականում տեղադրւում է հողի մէջ նախապէս փորուած անցքում) բառերից բաղկացած «Արտակ» անուններն արտայայտում են նոյն իմաստը՝ «մշակ», «հողագործ», «երկրագործ»:

Գեւորգը մարզպան է, այսինքն՝ կամսար: Ի տարբերութիւն այս բառի՝ Խորենացու ժողովրդական մեկնութեանը՝ «պակասաւոր գլուխ», այն գիտականօրէն ստուգաբանում է գերմանացի արեւելագէտ-իրանագէտ, լեզուաբան Ֆ. Յուստին (Justi), որի համաձայն, «կամսարը» ծագում է kamasara՝ «ըստ կամի իշխող», բառից համտ. Camisares՝ կուսակալ⁴⁸: Ի դէպ, համաձայն Անանիա Շիրակացու մի վկայութեան, Ե.-է. դդ. Հայաստանի կառավարիչները՝ սատրապները, մարզպանները, կոչուել են նաեւ կամսարականներ⁴⁹: Մեր յետագայ պրպտումները յանգեցրին այն հետեւութեան, որ Գ. դ. կէսերին Հայաստան տեղափոխուած պարթեւ Պահլաուհիները⁵⁰ կամսարական են կոչուել ըստ իրենց պաշտօնէութեան, այնպէս ինչպէս Ասպետունիները (Բագրատունիները), Հաւնունիները, Գնունիները եւ այլք: Եւ դա կատարուել է այն բանից յետոյ, երբ Հայոց Տրդատ Մեծ արքան (287-330) նրանց մեծարել ու բարձրացրել է մինչեւ

48 Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 577:
 49 Տե՛ս Ղ. Ալիշան, Ժիրակ, էջ 5:
 50 Պարթեւ Պահլաուհիների նախահայրերը՝ բնօրրանը, եղել է Մեծ Հայքի Տայք նահանգում գտնուող Բահլի եւ Պալխարի հովիտը: Այդտեղից այդ երկայնաբազուկ տիտանները, բարձրահասակ հսկաները, քաջ ուղիղները տարածուել եւ հաստատուել են հետաւոր Բակտրիանում, ապա հինգ հարիւր տարի թագաւորել են Պարսկաստանում (Ք.ա. 330-226 թթ.): Տե՛ս Ատրպետ, Ժորոխի աւագանը, Վիեննա, 1929, էջ 124, 137, 141:

«երկրորդ տէր արքայի», «գլխաւորք եւ յոյժ պատուական յետ արքայի»⁵¹:

Այսպիսով, կամսարական կնքուելը կրտսեր իշխանական անանուն տոհմի ներկայացուցիչներին (որոնք ժամանակ առ ժամանակ կոչուել են ըստ իրենց վարած պաշտօնների՝ Մարզպետուհեաց, Աբուղամբենց (անյարիր կը լինէր Սպարապետենց յորջորջուելը), բայց ինչպէս հռչակաւոր Վահրամ իշխանաց իշխանը Մարմաշէնում կ'արձանագրէր. «...որք էաք ամենայն տամբ եւ տոհմիւ հաւատարիմք տերանց մերոց եւ

նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մեր ...»⁵²)՝ բարձրացած Պահլաուհիներին, մի կողմից կապում է ս. Գրիգոր Լուսաւորչի զարմին՝ հնարաւորութիւն ընձեռելով յաւակնելու հայրապետական աթոռին, ինչը շատ չանցած, իրականանում է: Միւս կողմից էլ այդ հին կրականանումը, աղերսուելով Արշաուոյր տոհմանունը, աղերսուելով Արշակունեաց արքայական ընտանիքին, էլ աւելի է ամրապնդում նրանց քաղաքական դիրքէլը ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ Առաջաւոր Ասիայում⁵³:

51 Տե՛ս Ս. Կոզեան, կամսարականք, Տեաքք Ժիրակայ եւ Արշարունեաց, Վիեննա, 1926, էջ 9, 45:

52 Հ. Եղիազարեան, Մարմաշէնի վանքը... էջ 41-42: И. Орбели, Избранные труды, с. 441-442.
 53 Կարծես թէ իրականանում էր ս. Սահակ Պարթեւի յայտնի տեսիլն ի դէմս Պահլաուհեաց տոհմի ներկայացուցիչների: